ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«-----» դեկտեմբերի 2011թ. N--Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ, ՀԽՍՀ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԵՐԿՐԱԲԱՆ, ԳՆԴԱՊԵՏ ՊԵՐՃ ԲՈՇՆԱՂՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 1999 թվականի 31-ի N 551 որոշմամբ՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է*՝

Տալ համաձայնություն հասարակական-քաղաքական գործիչ, ՀԽՍՀ վաստակավոր երկրաբան, գնդապետ Պերճ Բոշնաղյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Չարենցի փողոցի հ.4 շենքի ճակատային հատվածում տեղադրելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Նախագծի հեղինակ՝

Մշակույթի, կրթության և սոցիալական
հարցերի մշտական հանձնաժողովի
նախագահի տեղակալ

Աննա Ասատրյան

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ, ՀԽՍՀ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԵՐԿՐԱԲԱՆ, ԳՆԴԱՊԵՏ ՊԵՐՃ ԲՈՇՆԱՂՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Որոշման ընդունման համար հիմք է հանդիսանում հասարակական-քաղաքական գործիչ, ՀԽՍՀ վաստակավոր երկրաբան (1971), ՀՀ Ազգային ժողովի երկրորդ գումարման (1999-2003) պատգամավոր, ՀՀ պատերազմի, աշխատանքի, զինված ուժերի և իրավապահ մարմինների վետերանների միության խորհրդի նախագահ (1996-2004), պահեստի գնդապետ (2000), պրոֆեսոր Պերճ Բոշնաղյանի (1920-2004) ունեցած մեծ ավանդը հայրենի գիտության զարգացման, աճող սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության և վետերանների խնդիրների լուծման գործում:

Մեծ հայրենականի տարիներին Պ. Բոշնաղյանը ծառայել է 89-րդ Հայկական Թամանյան հրաձգային դիվիզիայում: Մարտական մկրտությունն ստանալով Կովկասի համար մղած ճակատամարտում, հերոսաբար կռվել է Թաման թերակղզու, Կերչի, Սևաստոպոլի, Վարշավայի ազատագրման համար, աչքի ընկել Ղրիմի դեսանտային ու Վիսլա-Օդերյան գործողություններին և 1-ին Բելառուսական ռազմաճակատի կազմում մասնակցել Բեռլինի գրավմանը: Պ. Բոշնաղյանն արժանացել է երեք տասնյակից ավելի մարտական կառավարական պարգևների, այդ թվում՝ «Կարմիր դրոշի», Հայրենական պատերազմի առաջին աստիճանի երեք, «Կարմիր աստղի երկու շքանշանների, ինչպես նաև Կովկասի պաշտպանության համար, «Բեռլինի գրավման համար» և այլ մեդալների: 1948-ին ավարտելով ԵՊՀ-ը, ապա՝ ասպիրանտուրան, Պ. Բոշնաղյանն աշխատանքի է անցել ՀԽՍՀ ԳԱ երկրաբանության ինստիտուտում, ապա՝ 1950թ. Երևանի պետական համալսարանում, ուր աշխատել է շուրջ կես դար, զբաղեցրել մի շարք պատասխանատու պաշտոններ. 1952-1955թթ. և 1961-1962թթ. եղել է ԵՊՀ-ի պրոռեկտոր, 1959-1961թթ. և 1965-1968թթ.՝ երկրաբանական ֆակուլտետի դեկան և դեկանի տեղակալ, 1966-1968թթ. և 1992-1997թթ.՝ ղեկավարել է ընդհանուր և կիրառական երկրաբանության ամբիոնը, որի հիմնադիրներից էր: Պ. Բոշնաղյանը զբաղվել է գիտական գործունեությամբ, հրատարակել Հայաստանի երկրաբանական և բնապահպանական հիմնախնդիրներին նվիրված շուրջ 80

գիտահետազոտական աշխատություն, 1955թ. պաշտպանել թեկնածուական դիսերտացիա և ստացել երկրաբանահանքաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Անուրանալի է Պ. Բոշնաղյանի դերը Հայաստանում կատարված ճարտարագիտաերկրաբանական-հետախուզական, ջրային տնտեսության համար կարևորագույն նշանակություն ունեցող կառույցների նախագծերի հիմնավորման աշխատանքներում. Երևանի սելավաբեր ավազանի հետազոտություն և որոշակիացում, Կապանի հանքային դաշտի երկրաբանական պայմանների բազմակողմանի գնահատում և քարտեզագրում, Վանաձորի հեռանկարային նոր գլխավոր հատակագծի հիմնավորում, երկրաշարժի գոտու երկրաշարժակայուն և այլ արդիական հիմնախնդիրների ուսումնասիրություն: 1971-ին նրան շնորհվել է ՀԽՍՀ վաստակավոր երկրաբանի պատվավոր կոչում:

Ինչպես նաև հաշվի է առնվում ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի միջնորդությունը (12.04.2010)՝ Պ. Բոշնաղյանի հիշատակը հավերժացնելու համար (նամակը կցվում է, առդիր՝ մեկ էջ):

Հարցը Երևանի ավագանու Մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի դրական եզրակացությամբ ընդգրկվել էր Երևանի ավագանու չորրորդ նստաշրջանի չորրորդ նիստի (26 նոյեմբերի, 2010) օրակարգում և հանվել օրակարգից՝ առաջիկա նիստերից մեկում քննության առնելու նպատակով:

Նախագծի հեղինակ՝
Մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի
մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Աննա Ասատրյան

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ, ՀԽՍՀ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԵՐԿՐԱԲԱՆ, ԳՆԴԱՊԵՏ ՊԵՐՃ ԲՈՇՆԱՂՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հասարակական-քաղաքական գործիչ, ՀԽՍՀ վաստակավոր երկրաբան, գնդապետ Պերճ Բոշնաղյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

Նախագծի հեղինակ՝
Մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի
մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ **Աննա Ասատրյան**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ, ՀԽՍՀ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԵՐԿՐԱԲԱՆ, ԳՆԴԱՊԵՏ ՊԵՐՃ ԲՈՇՆԱՂՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հասարակական-քաղաքական գործիչ, ՀԽՍՀ վաստակավոր երկրաբան, գնդապետ Պերճ Բոշնաղյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

Նախագծի հեղինակ՝
Մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի
մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ **Աննա Ասատրյան**